ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1254-Ա « 05 » մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի Հ.3982-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Վարդան Ղազարյանի լ/ա Արսեն Ղազարյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի հ.3982-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-14236-26 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի «Հաղթանակ թիվ 11-2 և 11-2ա հասցեներում գտնվող հողամասերի սահմանները ճշտելու և հատակագծեր թողարկելու մասին» հ.3982-Ա որոշման նախաբանի 3-րդ պարբերությունում և 1-ին կետում՝ «Հաղթանակ տեղամաս թիվ 11-2 /վարելահող/ և 11-2ա /անօգտագործելի հող (իրացման ենթակա)/» բառերը փոխարինել «Հաղթանակ տեղամաս թիվ 11-2ա /անօգտագործելի հող իրացման ենթակա)/ և թիվ 11-2 /վարելահող/» բառերով:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ